Տնտեսական Զարգացման և Հետազոտությունների Կենտրոն

Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ)

Ինչ է տեղական ինքնակառավարումը

Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

ՀՀ վարչատարածքային միավորները

Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները:

Հայաստանի Հանրապետությունը բաղկացած է տասը մարզից, որոնք իրենց հերթին բաժանվում են քաղաքային և գյուղական համայնքների, և Երևան քաղաքից, որը համայնք է, և այնտեղ տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ մարզերը

Մարզպետներն իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

Մարզպետները պաշտոնի նշանակվում և ազատվում են Կառավարության որոշմամբ, և հաշվետու և պատասխանատու են Կառավարության առջև:

Հայաստանի Հանրապետության համայնքները

Համայնքը բնակիչների հանրություն և վարչատարածքային միավոր է:

Համայնքի սահմաններում բնակիչներն ուղղակիորեն կամ օրենքով սահմանված ընտրովի մարմինների միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում:

Համայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ:

Երևան քաղաքը համայնք է՝
Երևանի բնակչության հանրություն:

Երևանը բաժանված է 12 վարչական
շրջանների՝ թաղային համայնքների:

Երևան քաղաքի կառավարումը

Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են Ավագանին և Քաղաքապետը:

Ավագանին Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ:

Երևանի Ավագանին կազմված է 65 անդամից և ընտրվում է մեծամասնական կարգով:

Ավագանին ընտրվում է չորս տարի ժամկետով:

Երևան քաղաքի կառավարումը (2)

Երևան քաղաքի **քաղաքապետը** տեղական ինքնակառավարման մարմին է, ներկայացնում է Երևանը՝ որպես համայնք, ավագանին և քաղաքապետարանը այլ անձանց և մարմինների հետ հարաբերություններում, ղեկավարում է քաղաքապետարանը, հանդիսանում է Ավագանու անդամ:

Երևանի քաղաքապետ՝
Գագիկ Բեգլարյան

Քաղաքապետն ընտրվում է իրեն ընտրած ավագանու լիազորությունների ողջ ժամկետով:

Քաղաքապետի ընտրությունները

- Եթե ավագանու ընտրությունների արդյունքով ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկը ստանում է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը օրենքի ուժով համարվում է ընտրված քաղաքապետ:

- Այդ անձի՝ քաղաքապետին առաջադրվող պահանջներին չհամապատասխանելու կամ հրաժարվելու դեպքում, կամ եթե ավագանու ընտրությունների արդյունքով որևէ կուսակցություն չի ստանում ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա քաղաքապետն ընտրվում է գաղտնի քվեարկության միջոցով:

- Մեկից ավելի թեկնածու առաջադրվելու դեպքում քաղաքապետ է ընտրվում այն թեկնածուն, որը ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Ձայների մեծամասնությունը չստանալու դեպքում՝ երկու առավելագույն ձայն հավաքած թեկնածուների միջև անց է կացվում երկրորդ ընտրական փուլ:

Համայնքի ինքնակառավարումը

Համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է օրենքով սահմանված կարգով ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների՝ **համայնքի ղեկավարի** և **համայնքի ավագանու** միջոցով, որոնք օրենքով սահմանված կարգով ընտրվում են չորս տարի ժամկետով:

Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարը (քաղաքային համայնքում՝ քաղաքապետը, գյուղական համայնքում՝ գյուղապետը) պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսված լիազորություններ:

Համայնքի զարգացման ծրագիրը և բյուջեն

Յուրաքանչյուր համայնքի քառամյա զարգացման ծրագիրը մշակվում է համայնքի ղեկավարի և հաստատվում ավագանու կողմից:

Համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի քառամյա զարգացման ծրագրի և համայնքին՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը:

Այն կազմվում է համայնքի ղեկավարի և հաստատվում ավագանու կողմից:

Համայնքի բյուջեն բաղկացած է *վարչական* և *ֆոնդային* մասերից:

Համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասեր

Համայնքի բյուջեի **վարչական մասից** ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացման հետ կապված ընթացիկ (ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված իմաստով), պետության պատվիրակված լիազորությունների կատարման և ֆոնդային մաս միջոցների մասհանումների գծով ծախսերը, վարչական մասի ծախսերի ֆինանսավորման նպատակով ներգրաված բյուջետային փոխատվությունների մարումը, ինչպես նաև բյուջետային փոխատվությունների տրամադրումը:

Համայնքի բյուջեի **ֆոնդային մասից** ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացման հետ կապված կապիտալ (ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված իմաստով) ծախսերը, ֆոնդային մասի ծախսերի ֆինանսավորման նպատակով ներգրաված վարկերի մարումը, ինչպես նաև բյուջետային փոխատվությունների տրամադրումը:

Ֆինանսական համահարթեցում

Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերության նվազեցումն է:

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով նրանց հատկացվում են դոտացիաներ: